

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2022 թվականի N ____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2023
ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի
1-ին մասի 19-րդ կետի` **ավագանին որոշում է.**

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան
համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների
2023 թվականի դրույքաչափերը`

1)հասցեների տրամադրման համար` 5000 (հինգ հազար) դրամ.

2)համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման
փաստաթղթերի կազմման համար` 26 000 (քսանվեց հազար) դրամ.

3)համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության
հենասյուների օգտագործման համար` ամսական 500 (հինգ հարյուր) դրամ
յուրաքանչյուր հենասյան համար.

4)ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող վճարովի
հողատարածքի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար` 10000 (տասը
հազար) դրամ.

5)համայնքի գերեզմանատան պահպանման և սպասարկման ծառայության
համար` 10000 (տասը հազար) դրամ.

6)համայնքային սեփականություն հանդիսացող Բյուրեղավանի Մշակույթի
տան շենքի տարածքը վարձակալության տրամադրելու համար`

ա. դահլիճի տարածքը տրամադրելու համար` 1 ժամվա համար 15000
(տասնհինգ հազար) դրամ,

բ. սենյակները տրամադրելու համար` մեկ ամսվա համար` 30000 (երեսուն
հազար) դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից: